

Լուսինե Գրիգորյան

ՄՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (1964-1985 ԹԹ.)

Քանալի բառեր- Սփյուռք, մշակույթ, Սփյուռքի կոմիտե, ֆրանսահայ համայնք, հայկական գաղթօջախ:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետ՝ Սփյուռքի կոմիտե) ստեղծվել է Հայկական ՍՍՀ մինիստրների սովետի 1964 թ. մայիսի 26-ի թիվ 226 որոշմամբ¹: Սփյուռքի կոմիտեի նախագահ նշանակվեց պատմաբան Վարդգես Համազասայանը, որը պաշտոնավարեց 1964-1985 թթ.: Սփյուռքի կոմիտեի կազմում գործում էին տարածաշրջանների հայ համայնքների հետ կապերի բաժիններ (Ասիայի և Աֆրիկայի, Եվրոպայի, Ամերիկայի)²:

Անդրադառնալով Եվրոպական երկրների հայ համայնքների հետ հարաբերություններին՝ պետք է նշել, որ Սփյուռքի կոմիտեի հիմնադրումից հետո այստեղ ամենաջերմն այսպես կոչված «առաջադիմական» կազմակերպությունների և անհատ գործիչների հետ կապերն էին:

Սփյուռքի կոմիտեի համար առաջադիմական էին համարվում տեղի կոմունիստները, ՍԴՀԿ-ն, ՌԱԿ-ը, իսկ ռեակցիոն ուժ էր համարվում ՀՅԴ-ն իր կառույցներով: Ֆրանսիայում հայ կոմունիստներին հարող կառույցներն էին՝ Ֆրանսահայ մշակութային միությունը, Ֆրանսահայ երիտասարդական միությունը (ԺԱՖ)³, Կոմունիստական ուղղվածության թերթերն են՝ «Աշխարհը» և «Նոտր Վուա» պարբերականը⁴:

Պետք է նշել, որ Սփյուռքի կոմիտեի ստեղծումը մեծ խանդավառություն առաջացրեց ֆրանսահայության շրջանում: Ֆրանսահայ համայնքն անմիջապես արձագանքեց Սփյուռքի կոմիտեի ստեղծմանը: Ֆրանսահայ «հայաստանասեր» բոլոր թերթերը անմիջապես իրենց էջերը տրամադրեցին Սփյուռքի կոմիտեի ստեղծմանը վերաբերող նյութերին: Ֆրասիայի «Աշխարհ», «Բյուրակն» թերթերը արտատպեցին Սփյուռքի կոմիտեի պաշտոնաթերթ «Սովետական Հայաստանի» ընդարձակ հոդվածը՝ Սփյուռքի կոմիտեի ստեղծման մասին: Տպագրեցին Սփյուռքի կոմիտեի նախագահի կենսագրությունը, իսկ ավելի ուշ՝ նրա «Հայրենիք և սփյուռք» հոդվածը⁵: «Խորհրդային Հայաստանի 44-րդ տարեդարձը և կապի նոր ընկերությունը» վերնագրով հոդված տպագրվեց ֆրանսիական «Բյուրակն» թերթում, որի 1964 թ. դեկտեմբերի 1-ի համարում նշվում էր, որ հարկ է «Փրկել Սփյուռքը: Ժամակն է այլևս հայ ժողովրդի բոլոր տրամադրելի ուժերը կենդրոնացնել ի խնդիր այդ նպատակի իրագործման: Չկա ավելի կարևոր, ավելի ճգնաժամային հարց մը...»⁶:

Սփյուռքի կոմիտեի առաջնահերթ խնդիրն էր ֆրանսահայ համայնքի կազմակերպությունների և անհատ գործիչների հետ կապերի հաստատումը: 1964 թ. արխիվային նյութերի մեջ պահպանվել են ֆրանսահայ անհատ գործիչների և արվեստագետների ցուցակ, որոնց հետ նամակագրական կապ էր հաստատել և համագործակցում էր Սփյուռքի կոմիտեն: Այստեղ կարելի է առանձնացնել մի քանի առավել հայտնի անուններ, ում հետ համագործակցել էր Սփյուռքի կոմիտեն՝ Դարբինյան Աղասի (հասարակական գործիչ), Աթմաձյան Մառի (բանաստեղծուհի), Ենովք Արմեն (գրող, հրապարակախոս), Զուլույան Գառնիկ (Գառզու-նկարիչ), Շահնուր Շահան (գրող), Անրի Վեռնյ (Աշոտ Մալաքյան կինոբեմադրիչ) և այլք⁷:

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 875, ցուցակ 1, գործ 2, թուղթ 1-2:

² Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 1, թ. 1:

³ Տե՛ս նույն տեղում, ց. 9, գ. 18, թ. 1-2:

⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 9, թ. 3:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 1, թ. 1:

⁶ Նույն տեղում, թ. 4:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 1, գ. 22, թ. 1-6:

Ինչ վերաբերում է կազմակերպություններին, ապա պետք է նշել, որ ակտիվ կապեր էին հաստատվել ֆրանսահայերի մշակութային միության¹ և Ֆրանսիայի երիտասարդական միության հետ²: Կոմիտեն մշտական կապի մեջ է եղել նաև ֆրանսահայ գրողների հետ³: Պետք է նշել, որ Ֆրանսահայ մշակութային միության վարչության ջանքերով Հայաստան են ուղարկվել Արշակ Չոպանյանի, Վահան Մալեգյանի, Սեմա Աթմաճյանի, Ջապել Եսայանի և բազմաթիվ այլոց արխիվները, քանդակագործ Հ. Գյուրջյանի 300-ից ավել աշխատանքներ, Հ. Այվազովսկու 40-ից ավել նկարներ և այլն: Միայն մեկ տարվա ընթացքում 50 ֆրանսահայ նկարիչներ նվիրատվության կարգով իրենց գործերը ուղարկել են Հայաստանի պետական պատկերասրահին: Ֆրանսիայից ստացվել են նաև գրող Լևոն Մեսրոպի և պատմաբան Ճյուհերյանի արխիվների մի մասը, նկարիչ Արմիսի 30 կտավներն ու գործերը, Կամսարականի գործերը և այլն⁴:

Ակտիվ համագործակցություն կար Ֆրանսիայի երիտասարդական միության հետ⁵, որն ուներ 9 մասնաճյուղ, իսկ ղեկավարն էր Սարգիս Թաթևյանը: Ամեն տարի ԺԱՖ-ը «Սպուտնիկի»⁶ միջոցով հայրենիք էր ուղարկում մեծ թվով երիտասարդ զբոսաշրջիկներ, իսկ հայրենիքից երիտասարդության ներկայացուցիչներին հրավիրում էր ֆրանսիա՝ հանդիպումներ կազմակերպելու նպատակով⁷:

Արդեն 1964 թ. Ֆրանսահայ համայնքի հետ կապերն ընդլայնելու և խորացնելու համար Սփյուռքի կոմիտեում առաջ էին քաշվում մի շարք ծրագրեր.

1. կազմակերպված աշխատանք տանել ուսուցիչների և դպրոցականների հետ,
2. համապատասխան կազմակերպությունների հետ միասին Հայաստան հրավիրել ֆրանսահայ արվեստագետների և հասարակական գործիչների⁸,
3. ուղարկել վավերագրական կինոնկարներ,
4. ֆրանսահայ կազմակերպություններին ուղարկել լուսանկարչական հավաքածուներ⁹:

Անհրաժեշտ է նշել, որ Սփյուռքի կոմիտեի գլխավոր գործընկերը ֆրանսահայության շրջանում դարձավ ՀԲԸՄ-ն իր մասնաճյուղերով: Համազասպյանը նամակագրական կապ էր հաստատել Փարիզում գտնվող ՀԲԸՄ-ի Եվրոպական կենտրոնական հանձնաժողովի ատենապետ Ս. Քարյանի հետ: Նամակներում քննարկվել են ուսանողներին կրթաթոշակներ հատկացնելու, ՀԲԸՄ Փարիզի մատենադարանում գտնվող «Ազգային պատվիրակության» (Նորատունկյանի և Պողոս Նուբար փաշայի) արխիվները Հայաստան տեղափոխելու, գրքերի առաքման հարցերը¹⁰:

Ֆրանսահայ համայնքի հետ կապերի առումով 1965 թ. բեղուն տարի էր, որն համընկավ խորհրդիայ «գարթոնքի» հետ և զգալիորեն նպաստեց կապերի ամրապնդմանը: Շարունակվում էր նոր կապերի հաստատման ընթացքը, ինչպես նաև Սփյուռքի կոմիտեն ստանում էր նորանոր նամակներ՝ խնդրանքներով և համագործակցության առաջարկներով:

Պետք է նշել, որ ֆրանսահայերից ստացված նամակները հիմնականում գրականության առաքման, Հայաստանի բուհերում սովորելու, ֆրանսահայ զաղթօջախում սովետահայ գրականությունն ու մշակույթը ներկայացնելու և այլ հարցերի շուրջ էին¹¹:

Սփյուռքի կոմիտեի աշխատանքներում կարևոր տեղ էին զբաղեցնում փոխայ-

¹ Տե՛ս Գասպարյան Ս., Սփյուռքահայ մշակութային և հայրենակցական միությունները արդի շրջանում, «ՊԲՀ», 1970, N 3, էջ 275:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 5, թ. 2:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 10:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 281, թ. 14:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 2:

⁶ «Սպուտնիկ»-ը երիտասարդական միջազգային տուրիստական կազմակերպությունը էր, որը հիմնվել էր 1958 թ. ԽՍՀՄ-ում: Դրա շնորհիվ Խորհրդային հանրապետությունները նույնպես ընդգրկվեցին զբոսաշրջային երթուղիներում:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 122:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 1, գ. 12, թ. 1:

⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 4-5:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 2, գ. 254, թ. 23-30:

¹¹ Տե՛ս նույն տեղում, գ. 4, գ. 281, թ. 5:

ցելությունները: Արդեն 1966 թ. Կոմիտեի հրավերով շուրջ 2 ամիս Հայաստանում հյուրընկալվել է ֆրանսահայ երիտասարդ բնանկարիչ Ռիշար Ժերանյանը: Նրա գործերի ցուցահանդեսը կազմակերպվել է ոչ միայն Երևանում, այլև Լենինականում (այժմ Գյումրի): Նրա գործերի ֆոտոպատճենների ցուցահանդեսը կազմակերպվել է նաև Իջևանում¹: Սփյուռքի կոմիտեի հրավերով Հայաստան են այցելել նաև Ֆրանսահայ մշակութային միության վարչության նախագահ Հովսեփ Սվաճյանը, վարչության քարտուղար Զարեհ Զամշյանը, նախագահության անդամ Ղարբինյանը, «Աշխարհ» թերթի խմբագիր Ավ. Ալիքյանը, բարերար Նապոլեոն Բլքյանը²:

Ֆրանսահայ մշակութային միության և ԺԱՖ-ի հրավերով Ֆրանսիա են այցելել գրողների միության առաջին քարտուղար Է. Թոփչյանը, Ս. Խանգադյանը և Վ. Համազասպյանը, որոնք մեկ ամիս եղել են Ֆրանսիայում և ծանոթացել տեղի հայկական կազմակերպությունների աշխատանքներին, միաժամանակ Լիոնում, Մարսելում, Վալանսում, Փարիզում և այլ քաղաքներում հանդիպումներ են ունեցել մշակութային, կուսակցական, հասարակական, գրական, կրթական, երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների, մամուլի աշխատակիցների, եկեղեցականների և այլ խավերի ներկայացուցիչների հետ: Ելույթներ են ունեցան հայ համայնքների հավաքույթներում³:

Հիշատակման է արժանի Սփյուռքի կոմիտեի կատարած գործերից ուսուցիչների վերապատրաստումները, որոնք իրականացվում էին հայրենիքում: 1965 թվականից սկսած՝ Հայաստան ժամանած ուսուցիչների ցանկում, ֆրանսահայ ուսուցիչները ունեին իրենց մշտական ներկայացուցիչը⁴:

Սփյուռքի կոմիտեն մեծ կարևորություն էր տալիս հոբելյանական միջոցառումների նշելուն: Մասնավորապես կարելի է առանձնացնել սփյուռքահայ մի շարք շրջանակների կողմից Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի նշումը: Այդ առթիվ Սփյուռքի կոմիտեն արտասահման է առաքել քարոզչական նյութեր, իսկ Հայաստանում տեղի ունեցած տոնակատարությանը մասնակցելու համար հրավիրվել էին մեծ թվով սփյուռքահայեր: Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի տոնակատարությանը մասնակցելու համար Սփյուռքի կոմիտեի հրավերով Հայաստան էին ժամանել 701 հյուրեր⁵, որոնց մեջ էին Ֆրանսահայ մշակութային միությունը ներկայացնող միության գլխավոր քարտուղար Զարեհ Զաքմիշյանը, «Աշխարհ» թերթի խմբագիր Ավետիս Ալիքյանը, նկարիչ Ռիշար Ժերանյանը և քանդակագործուհի Ղարիա Կամսարականը⁶:

Սփյուռքահայ «առաջադիմական» մամուլը որոշ չափով արձագանքեց Հոկտեմբերյան հեղափոխության 50 և Հայաստանի սովետական կարգերի հաստատման 47 ամյակներին⁷:

Պետք է նշել, որ սփյուռքահայ «առաջադիմական» մամուլը նոյեմբերի 7-ի և 29-ի իրենց համարներում անդրադարձել են այդ իրադարձություններին:

Հատկանշական են Փարիզի «Աշխարհ» եռօրյա թերթում լույս տեսած Զատիկ Խանգադյանի «Ողջույն սովետական հիսնամյակին» հոդվածը, ինչպես նաև հոկտեմբերի 28-ին նույն համարում լույս տեսած իտալական «Էմիգրանտե» թերթի «Հանդիպում Սովետական Հայաստանի հետ» հոդվածը: Հետագայում նոյեմբերի 4-ին, տպագրվել է բանաստեղծ Հենրիկ Թումանյանի «Քանդակներ Հոկտեմբերին» ոտանավոր: Հեղափոխության հոբելյանին «Աշխարհը» նվիրել է առաջնորդող հոդված «Մեծ հիսնամյակը» վերնագրով: Նոյեմբերի 11-ի և 15-ի համարներում թերթը շարունակաբար տպագրել է «Մեծ հոկտեմբերը և ազգային պետականության ծնունդը» ծավալուն հոդվածը: Թերթն անդրադարձել է նաև Հայաստանի 47-րդ տարեդարձին և տպագրել մի շարք նյութեր⁸:

¹ Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 17, թ. 41:

² Տե՛ս նույն տեղում, գ. 1, գ. 36, թ. 15:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 16:

⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 5, թ. 14:

⁵ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 28, թ. 2:

⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 9, թ. 18:

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 19:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 78, թ. 1-5:

Այդ օրերին Ֆրանսահայ մշակութային միության հրավերով 15 օրով Փարիզ է հրավիրվել դոկտոր-պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը՝ Հովհ. Թումանյանի և Սովետական Հայաստանի 50-ամյա հոբելյանին նվիրված գեկուցումներ, դասախոսություններ կարդալու նպատակով¹:

1967 թ. Հայաստանում մեծ հանդիսությամբ նշվում էր մեծ բանաստեղծ Ե. Չարենցի ծննդյան 70-ամյա հոբելյանը²: Այս առիթով Սփյուռքի կոմիտեի հրավերով Հայաստան են ժամանել Ֆրանսահայ գրողների միության նախագահ Մառի Աթմաճյանը, Ֆրանսահայ արձակագիր Ջարեհ Որբունին³ և նկարիչ Ջարեհ Մութաֆյանը⁴:

Ֆրանսահայ համայնքի մասին ավելի լայն պատկերացումներ է տալիս արխիվում առկա տեղեկագրերը: Մասնավորապես 1967 թ. թվագրմամբ տեղեկագրից հնարավորություն ենք ստանում տեղեկանալ, որ այդ ժամանակահատվածում Սփյուռքում ապրում էր 1,5 մլն հայ, որոնցից 200.000-ը Ֆրանսիայում:

Գործունեության առաջին իսկ տարիներից Սփյուռքի կոմիտեն իր առջև դրված կարևորագույն խնդիր էր համարում դաշնակցականների դեմ հետևողական պայքար մղելը: 1967 թ. աշխատանքային հաշվետվության մեջ նշված էր, որ Սփյուռքի կոմիտեի գլխավոր համար նպատակն է դաշնակցականներին մեկուսացնել հայկական շրջանակներից և զրկել հայրենակիցների համակրանքից: Միաժամանակ պետք էր աշխատանք տանել թափանցելու այն շարքերը, որտեղ կային աշխատավորներ և «խաբվածներ», որոնք ունեին հայրենասիրական տրամադրություններ, սակայն հստակ չէին պատկերացնում ճշմարտությունը:⁵ Սակայն հետագա դեպքերը ցույց տվեցին, որ Սփյուռքի կոմիտեն ծախողել էր իր առջև դրված այդ խնդիրը, քանզի ինչպես մյուս համայնքներում, Ֆրանսիայում ևս դաշնակցական ուժերը գնալով ամրապնդում էին իրենց դիրքերը⁶: Արխիվում առկա է Սփյուռքի կոմիտեի 1969 թ. գործունեության հաշվետվությունը, որը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում ստանալ նախորդ հնգամյակում իրականացված աշխատանքների վերաբերյալ⁷:

Ինչպես արդեն նշվել էր, Սփյուռքի կոմիտեի գլխավոր գործընկերներից էր ՀԲԸՄ-ն իր մասնաճյուղերով և ամենևին պատահական չէր, որ 1969 թ. մայիսին Փարիզում հրավիրված ՀԲԸՄ-ի խորհրդակցական համագումարին հրավիրված էին նաև Վ. Համազասպյանը և Վ. Դավթյանը: Հավաքվել էին 600-ից ավելի պատվիրակներ⁸:

Սփյուռքի կոմիտեի հրավերով Ֆրանսահայ պատվիրակություններ են հայրենիք ժամանել՝ Հովհաննես Թումանյանի⁹ և Կոմիտասի¹⁰ ծննդյան 100-ամյա հոբելյանական միջոցառումներին մասնակցելու:

Եթե ամփոփենք Ֆրանսիայում Սփյուռքի կոմիտեի գործունեության առաջին հնգամյակը, կարող ենք նշել, որ Ֆրանսահայ համայնքի հետ կատարվել է զգալի աշխատանք, ընդլայնվել և հաստատվել են նոր կապեր:

Սփյուռքի կոմիտեի 1970 թ. աշխատանքային ծրագրով, բացի նախորդ ավանդական դարձած ծրագրերից, առաջ էին քաշվում նորերը.

1. մտավորականների և արտիստների նոր խմբեր ուղարկել Ֆրանսիա,
2. նշել Վ. Լենինի ծննդյան 100-ամյակը,
3. 1970 թ. հայտարարել հոբելյանական տարի՝ ՀՍՍՀ ստեղծման 50-ամյակի առթիվ,

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 33:

² Վարդանյան Ն., Մշակութային և հասարակական կյանքը սփյուռքում (1967 թ. հուլիս-դեկտեմբեր), «ՊԲՀ», 1968, № 1, էջ 272:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 9, թ. 18:

⁴ Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 287:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 9, թ. 59:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 5, գ. 11, թ. 9:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 4, գ. 17:

⁸ Տե՛ս Միրզախանյան Ռ., Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը 1966-1990 թվականներին, «ԼՀԳ», 2008, N 2, էջ 212-213:

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 38, թ. 6-7:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 12:

4. հայկական դպրոցներին մեթոդական օգնություն ցուցաբերել:

Սկսած 1970 թվականից՝ Սփյուռքի կոմիտեն ամեն տարի շուրջ մեկ ամիս ժամկետով Հայաստան էր հրավիրում երիտասարդների մի քանի տասնյակ հոգուց բաղկացած խմբեր, որոնք Կոմիտեի կազմակերպած դասընթացներում ուսումնասիրում էին հայոց պատմություն, հայոց լեզու և գրականություն: Նրանք սովորում էին հայկական երգեր ու պարեր, հանդիպում գիտության և մշակույթի գործիչների հետ: Խորը տպավորությամբ վերադառնալով՝ նրանք նպաստում էին նոր խմբերի հայրենիք այցելությանը: Այդ խմբերում միշտ ընդգրկված էին լինում ֆրանսահայ ներկայացուցիչներ¹:

1970 թ. հուլիսին Ֆրանսիայից Երևան է ժամանել 70 հոգուց բաղկացած զբոսաշրջիկներ խումբ, որոնց ընդունել էր Սփյուռքի կոմիտեն²:

Պետք է նշել, որ 1970 թ. զեկուցագիրը ֆրանսահայ գաղթավայրի և մշակութային միության գործունեության մասին ևս բավականաչափ տեղեկություններ է հաղորդում գաղութի մասին: Ըստ այդ զեկուցագրի՝ Ֆրանսիայում հայերի թիվաքանակը փոփոխության չի ենթարկվել: Հայերը գլխավորապես հաստատված էին Փարիզում, Մարսելում և Լիոնում:

Ֆրանսիայում գործում էին բազմաթիվ հայկական մշակութային, երիտասարդական, մարզական, ուսանողական, բարեգործական և այլ կազմակերպություններ: 1970 թ. դրությամբ ֆրանսահայ համայնքը հիմնականում էջմիածնական թեմ էր, որի առաջնորդն է Սերովբե արք. Մանուկյանը: Պետք է նշել, որ արդեն 1963 թ. ստեղծվել էր նաև Անթիլիասի թեմը³:

Ֆրանսիայում հրատարակվում էին ֆրանսահայ մշակութային միության «Աշխարհ» եռօրյա պաշտոնաթերթը, ԺԱՖ-ի պաշտոնաթերթ «Նոտր Վուան», ՌԱԿ-ի «Նոր Ապագա» շաբաթաթերթը, ՀՅԴ-ի «Հառաջ» օրաթերթ և «Հայաստան» շաբաթաթերթը, անկուսակցական «Խթան» և «Անդաստան» թերթերը⁴:

Հատկապես հետաքրքիր են այն խնդիրները, որոնք Ֆրանսահայ մշակութային միությունը դրել էր իր գործունեության հիմքում: Դրանցից կարելի է հատկապես առանձնացնել.

1. ընդլայնել մշակութային կապերը հայրենիքի հետ,
2. ամրապնդել հայ-ֆրանսիական հարաբերությունները,
3. ցույց տալ, թե ինչ է Սովետական Հայաստանը հայ ժողովրդի համար,
4. երիտասարդությանն օգնել գիտակցելու ազգային ժառանգության հարստությունը, հատուկ ուշադրություն դարձնել ֆրանսահայ երիտասարդաց միությանը,
5. աջակցել գեղարվեստական ու մշակութային նոր արժեքների զարգացմանը⁵:

Պետք է նշել, որ այս ժամանակահատվածում Սփյուռքի կոմիտեն ակտիվացրել էր երիտասարդների հետ իր աշխատանքը: 1971 թ. Երևանում տեղի է ունեցել Սփյուռքի երիտասարդական-առաջադիմական կազմակերպությունների ներկայացուցիչների հավաք-հանդիպումը⁶:

Այս շրջանում ևս շարունակվում էին սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները հայրենիքում, որտեղ միշտ իր ներկայացուցիչն է ունեցել Ֆրանսիան: 1972 թ. վերապատրաստվող ուսուցիչների մեջ Ֆրանսիան ունեցել է մեկ ներկայացուցիչ⁷:

1973 թ. Ֆրանսահայերի մշակութային միությունը Ֆրանսիայում անցկացրել է կինոցուցադրություն, որտեղ ցուցադրվել են սովետահայ ֆիլմեր: Սփյուռքի կոմիտեն տրամադրել էր «Հայֆիլմի» ֆիլմերից մի քանիսը⁸: Այս ժամանակահատվածում ևս

¹ Տե՛ս «Սովետական Հայաստան», № 9, 1977, էջ 35:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 338, թ. 24:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 20:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 4, գ. 53:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 8, գ. 24, թ. 14:

⁶ Տե՛ս «Սովետական Հայաստան», 1971, № 4, էջ 22-23, № 5, էջ 4:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 11, թ. 9:

⁸ Տե՛ս նույն տեղում գ. 4, գ. 17:

Ֆրանսիայում շարունակվում էին կարևոր տարելիցների նշումը, փոխայցելություններն ու համագործակցության առաջարկները¹:

Պետք է նշել, որ այս շրջանում Սփյուռքի կոմիտեի գրանցամատյանում պահպանված էին ֆրանսահայ 90 կազմակերպություն, որոնցից 12-ը դպրոց էին, 10՝ եկեղեցի և 499՝ անհատ²:

Արդեն պարզ նշմարվում էր, որ Սփյուռքի կոմիտեի հիմնական աշխատանքը գնում էր մշակութային միջոցառումներ իրականացնելուն, չնայած նրան, որ սկզբնական շրջանում առավել լայն գործունեության ուղղություններ էին որդեգրել:

1978 թ. սեպտեմբերին Սփյուռքի կոմիտեն ընդունել է «Արաքս» և «Սասուն» երգի ու պարի խմբերից 30 ներկայացուցիչ: Հրավերով Հայաստանում են եղել է նաև «Աշխարհ» թերթի և «Նոտր վուա» ամսագրի ներկայացուցիչները:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյա տոնակատարություններին Ֆրանսիայից հրավիրվել էին չորս հոգուց բաղկացած պատվիրակություն³:

Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի 1979 թ. նոյեմբերի 22-ին Փարիզի «Պլեյել» սրահում տված համերգի և դրա ունեցած ոգևորիչ ազդեցության մասին բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը գրել է. «Մեր հոգեկան ներուժության կենտրոնացումի, վերածնված Հայաստանից եկող և փոխադարձ հոգևոր կապի զորեղ մի արտահայտություն էր Փարիզի «Պլեյել» դահլիճում կատարվածը»⁴:

Շուտով Սփյուռքի կոմիտեն իրականացրեց Մայր Հայաստանի և Սփյուռքի հարաբերություններում նշանակալից իրադարձություն հանդիսացող 1980 թ. նոյեմբերի 24-ին ՀԽՍՀ ԳԱ դահլիճում բացված սփյուռքահայ ներկայացուցիչների համաժողովը: Համաժողովի նշանաբանն էր՝ «Վերածնված հայրենիքը և սփյուռքը, պայքար հանուն խաղաղության և առաջադիմության»: Մասնակիցների թվում էին հանրապետության հասարակայնության ներկայացուցիչներ և մշակույթի գործիչներ: Ժողովը բացել է ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ, նախապատրաստական կոմիտեի նախագահ Վ. Համբարձումյանը, որը մասնավորապես նշել է. «Ընդունված է ասել, որ հայ ժողովուրդը աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկն է, և դա ճիշտ է: Բայց մինևույն ժամանակ հայ ժողովուրդը ամենաերիտասարդ ժողովուրդներից մեկն է, որովհետև ապացուցեց, որ կարող է հաղթահարել հինը, հասկանալ նորը և նոր ուղիներ հարթել, նոր էջեր գրել պատմության դարավոր գրքում»⁵:

Ի վերջո հաջողվեց գումարել բովանդակությամբ Հայրենիք–Սփյուռք հարաբերությունների զարգացման հենքային նշանակություն ունեցող համայնքների ներկայացուցիչների հավաք⁶: Սփյուռքի կոմիտեն համաժողովն անվանում էր նաև «Հայրենիք–սփյուռք համաժողով»⁷:

Պետք է նշել, որ չնայած այս ամենին, 1980 թ. Սփյուռքի կոմիտեում արդեն խոսվում էր աշխատանքների ոչ բավարար կատարման և բուրժուական գաղափարախոսության, հատկապես դաշնակցական ուժերի դեմ պայքարի անբավարար լինելու մասին⁸:

Պետք է նշել, որ արդեն 1980 թ. սկզբի դրությամբ Ֆրանսիայի հայությունը հասնում էր 250 հազարի, որոնք կենտրոնացած էին 10 հիմնական քաղաքներում⁹:

Սփյուռքի կոմիտեն հատկապես կարևորվում էր պայքարը հակախորհրդային ուժերի և նրանց օրգանների դեմ, որոնցից կարելի է առանձնացնել «Առաջ» ամենօրյա և «Ազատություն» շաբաթաթերթը, ամենամայա «Հայաստան» թերթը, որը ղեկավարվում

¹ Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 17:

² Տե՛ս նույն տեղում, ց. 6, գ. 19, թ. 43-44:

³ Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 206, թ. 1-4:

⁴ Տե՛ս Միրզախանյան Ռ., նշվ. աշխ., էջ 217:

⁵ ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 9, գ. 49, թ. 1-2: Տե՛ս նաև «Սովետական Հայաստան», 1980, № 12, էջ 7-34:

⁶ Տե՛ս Եղիազարյան Ա., Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները 1964-1985 թթ., «Պատմություն և հասարակագիտություն տարեգիրք», № 1, 2015, էջ 70:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 4-5:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 33:

⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 25, թ. 1:

է «Նոր սերունդ» երիտասարդական միության կողմից¹:

Երիտասարդության հետ կապերը խթանելու համար 1980 թ. Սփյուռքի կոմիտեի կազմում ստեղծվեց երիտասարդության հարցերի բաժին, որը փորձեց ակտիվ կապեր հաստատեց ֆրանսահայ երիտասարդության հետ²:

Կարելի է առանձնացնել 1981 թ. Երևանում կազմակերպված արտասահմանի լրատվամիջոցների խմբագիրների հավաքը, որին մասնակցել են նաև ֆրանսահայերը³:

Նույն թվականի մայիսին Ֆրանսիա է այցելել Կոմիտեի նախագահ Համազասպյանը: Ֆրանսիայում ելույթներ են ունեցել Կոմիտասի անվան քառյակը մեներգչուհի Լ. Ջաքարյանի հետ, խումբը ղեկավարել է Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Էդվարդ Միրզոյանը⁴:

Ֆրանսահայ երիտասարդական միության պարախմբին հայկական պարեր սովորեցնելու նպատակով Ֆրանսիա է գործուղվել հանրապետության ժողովրդական դերասան, պարուսույց Վանիկ Խանամիրյանը⁵: Նույն տարիներին Ֆրանսիա մեկնող արվեստագետներն էին Էդգար Հովհաննիսյանը, Առնո Բաբաջանյանը, Լուսինե Ջաքարյանը, Ժան Տեր-Մերգերյանը, Լևոն Մամիկոնյանը, Մարտին Երիցյանը, Ֆելիքս Սիմոնյանը, Ջեմֆիրա Բարսեղյանը, Յուրի Մանուկյանը⁶:

Այցելությունների գրանցամատյանում պահպանվել է 1986 թ. Ֆրանսիա այցելության մասին նյութեր, որոնք հստակ պատկերացում են տալիս Ֆրանսիայում Սփյուռքի կոմիտեի՝ մի շարք հարցերում ունեցած ձախողումների մասին:

Այստեղ մասնավորապես նշված էր, որ Ֆրանսիայում զգալի էին «հայրենասիրական» և չեզոք ուժերի անմիաբանությունը, մինչդեռ դաշնակցությունը ամուր խարիսխներ էր ստեղծում: Ֆրանսահայ մշակութային միություն ղեկավարությունից սկսել են դժգոհություններ գալ, նրանք ոչինչ չէին ձեռնարկում միավորման և գործունեության մեծացման համար, համագործակցող ուժերն այն համարում էին քարացած կաստա: Ծանր էր «Աշխարհ» թերթի նյութական վիճակը:

Խիստ անբավարար էր նաև Էջմիածնին ենթակա թեմերի վիճակը Ֆրանսիայում: Զգացվում էր հոգևորականների մեծ պակաս⁷:

Ակնհայտ է, որ համահայկական բնագավառային հավաքները, որոնք 1981-1985 թթ. պարբերաշրջանում կազմում էին Սփյուռքի կոմիտեի գործունեության առանցքը, նպատակ էին հետապնդում լրացնելու այն բացը, որն առաջանում էր Սփյուռքի կոմիտեի ներկայացուցիչների՝ սփյուռքահայ համայնքներում աշխատելու սահմանափակ հնարավորությունների հետևանքով⁸:

1985 թ. Սփյուռք ուղարկված արվեստագետների խմբի առջև դրվել էին հստակ սահմանափակումներ՝

1. հանդիպել միայն «առաջադիմական» կազմակերպությունների, դպրոցների, թատերախմբերի, մարզական ու երիտասարդական միությունների հետ,
2. համերգները պետք է լինեին ելույթների տեսքով, խուսափելն զրույցներից,
3. կրոնական կազմակերպությունների հովանու ներքո գտնվող դպրոցներ ու կազմակերպություններ այցելելիս նախապատվությունը տալ Հայ առաքելական եկեղեցու Էջմիածնական թեմին,
4. հետադիմական կազմակերպությունների հետ հանդիպումներ չունենալ,
5. պաշտոնական հայտարարություններ չանել և խոստումներ չտալ⁹:

1985 թ. Ֆրանսիա մեկնած արվեստագետների ցուցակում են եղել Սիեր Մկրտչյանն ու Թամար Հովհաննիսյանը: Ելույթներից բացի՝ նրանք Սփյուռքի կոմիտեի

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 7:

² Տե՛ս նույն տեղում, գ. 40, թ. 11:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 14, գ. 8:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 9, գ. 54, թ. 11:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 12:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 33:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 13, գ. 48, թ. 9-14:

⁸ Տե՛ս Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 73:

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, գ. 15, գ. 18, թ. 9:

հանձնարարությամբ օգնել են ֆրանսահայ թատերախմբերին՝ երևանյան փառատոնին նախապատրաստվելու շրջանակներում¹:

Ինչպես երևում է, Սփյուռքի կոմիտեն բազմաթիվ հարցերում իրեն սպառել էր և այլևս չէր կարող պայքարել համայնքներում գերակա դիրք զբաղեցնելու համար:

Անփոփելով կարող ենք նշել, որ Սփյուռքի կոմիտեն իր առջև դրված խնդիրներն իրականացնելու նպատակով կապեր հաստատեց ֆրանսահայ համայնքի «առաջադիմական» կազմակերպությունների հետ: Ֆրանսահայության շրջանում Սփյուռքի կոմիտեն իրականացրեց ուսուցիչների վերապատրաստում, հայրենիքում երիտասարդների հանգստի կազմակերպում, ուսանողների կրթության ապահովում, փոխայցելությունների կազմակերպում:

Лусине Григорян, Деятельность Комитета по культурным связям с армянами диаспоры в армянской общине Франции в 1964-1985 гг., - Комитет был основан в 1964 году для развития отношений с армянскими общинами Диаспоры. Для достижения своих целей комитет установил контакты с «прогрессивными» организациями армянской общины Франции. В своей деятельности Комитет сконцентрировался на подготовке учителей армянской общины Франции, обеспечении отдыха армянской молодежи Франции и учебы студентов в Армении а также организации визитов групп соотечественников.

Lusine Grigoryan, Main activities of the Committee for Cultural Relations with Diaspora Armenians in Armenian community of France in 1964-1985, - The Committee was founded in 1964 to develop relations with Armenian communities of Diaspora. To reach its goals the Committee established contacts with the «progressive» organizations of the Armenian community of France. In its activities, the Committee focused on the training of teachers of the Armenian community of France, the provision of recreation for the Armenian youth of France in Armenia and the study of students and the organization of visits of groups of compatriots.

¹ Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 7, թ. 16: